«Ուղղակի ժողովրդավարություն»
ժողովրդավարական ինստիտուտների
ամրապնդման ՀԿ

Հասցե՝ քաղաք Վանաձոր,
Տիգրան Մեծի 47/13-1

Հեռ. (+374) (98) 200-166

DIRECT DEMOCRACY
For Consolidation Of Democratic Institutions NGO

´´Direct democracy´´ NGO for
consolidation of democratic
institutions

Address: Lori Region, Vanadzor, Tigran
Mets 47/13-1

Tel. (+374) (98) 200-166

ԹԻՎ 01/281
25.12.2025թ.

Լոռու մարզպետ
Արեն Մկրտչյանին

Հ Ա Ր Ց Ու Մ

Հարգելի պարոն Մկրտչյան

Կազմակերպությունը դիտարկել է Թումանյան համայնքում 2025 թվականի դեկտեմբերի 24-ին տեղի ունեցած ավագանու հերթական նիստը:

Ըստ ս.թ. նոյեմբերի 28-ին Թումանյան համայնքում կայացած ավագանու հերթական նիստի արձանագրության N 97-Ա որոշման 2025 թվականի դեկտեմբերի 26-ին, ժամը 11:00-ին նշանակված է եղել ավագանու հերթական նիստ (կից նիստի արձանագրությունը):

Մշտադիտարկման արդյունքում հայտնաբերվել են հետևյալ խնդիրները՝

1. ս.թ. դեկտեմբերի 24-ին, ժամը 11:40-ի սահմաններում գումարվել է Թումանյան համայնքի ավագանու հերթական նիստ, որի մասին համայնքի կայքէջի հայտարարություններ բաժնում բացակայել է օրվա փոփոխության մասին տեղեկատվությունը,
2. նիստից առաջ և նիստի ընթացքում համայնքի պաշտոնական կայքէջի ավագանու նիստեր բաժնում տեղադրվել է միայն օրակարգային հարցը, բայց օրակարգում առկա քննարկվող նախագծերը առանձին-առանձին իրենց անհրաժեշտ տեղեկատվությամբ չեն տեղադրվել:

Թումանյան համայնքի ղեկավարին հարցում է ուղարկվել պարզաբանելու համար հետևյալ խնդիրների մասին և կազմակերպությունը ստացել է պատասխան այն մասին, որ տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ և համայնքի պաշտոնական կայքէջում տեղադրվել է սխալ ամսաթվով արձանագրությունը, միաժամանակ հայտնում են, որ Լոռու մարզի մարզպետարանի կայքէջում տեղադրված է ճիշտ օրվա՝ դեկտեմբերի 24-ին կայանալիք ավագանու նիստի մասին տեղեկատվությունը (կից Թումանյան համայնքի ղեկավարի պատասխան նամակը):

Այսպիսով՝ ստացվում է, որ Թումանյանի համայնքապետարանը հաշվետու է միայն Լոռու մարզպետարանին և ոչ թե համայնքի բնակիչներին:

Ըստ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի, 3000 և ավելի բնակիչ ունեցող համայնքներում ավագանու նիստի անցկացման վայրի և ժամի, ինչպես նաև քննարկվող նախագծերի մասին տեղեկատվությունը կից փաստաթղթերով պետք է տեղադրվի համայնքի պաշտոնական կայքէջում՝ նիստից առնվազն յոթ օր առաջ:

Այսպիսով, վերոգրյալները փաստում են, որ ս.թ. դեկտեմբերի 24-ին կայացած ավագանու հերթական նիստն անցկացվել է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի խախտմամբ, ինչը խաթարում է թափանցիկ ու հաշվետվու գործելաոճը:

Խնդրում ենք տալ պարզաբանում հետևյալ խախտման մասին:

Կից՝ տեղի ունեցած խախտումների էկրանի պատճենները, ըստ ս.թ. դեկտեմբերի *24*-ի, ժամը *12*:*05*-ի:

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*(ԶԵԿ. ՌՈՒԶԱՆՆԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու իններորդ նստաշրջանի նիստի օրը որոշել 2025 թվականի դեկտեմբերի 26-ը, ժամը 11:00:

Հեղ. ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

## ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2025 թվականի N_

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասով՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Թումանյան համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգը.

1) ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու 2025թ. դեկտեմբերի 24-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին
2) ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի 2026 թվականի բյուջեն հաստատելու մասին
3) Թումանյան համայնքի ավագանու 2024թ. դեկտեմբերի 20-ի «Թումանյան համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 119-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
4) Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարման մասին
5) Թումանյանի համայնքապետարանի գույքացանկում ընդգրկելու մասին
6) Թումանյանի համայնքային ենթակայության ՀՈԱԿ-ի սեփականություն հանդիսացող ժամկետանց,փչացած և օգտագործման ոչ պիտանի գույքի դուրսգրմանը համաձայնություն տալու մասին
7) ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու տասներորդ նստաշրջանի հերթական նիստի օրը որոշելու մասին

Կողմ (0) Դեմ (0) Ձեռնպահ (0) Չի քվեարկել (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Նախագիծ կազմող ՌՈՒԶԱՆՆԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

1°C Mostly sunny Поиск ENG 12:05 24.12.2025

ՀԱՄԱՅՆՔ ⌄ ՏԻՄ ⌄ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ⌄ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵ ⌄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔ ⌄ ՏԵՂԵԿԱՏՈՒՆԵՐ ⌄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ⌄ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Նամակներ

Միջոցառումներ

Համայնքի ղեկավար

Ավագանի

Ավագանու անդամներ

Ավագանու նիստեր

Ավագանու որոշումներ

Ավագանու որոշման նախագծեր

Կանոնակարգ

ՀՁՔԾ

## Ավագանու նիստ թիվ 9, 24/12/2025 11:00

Դիտել ցանկը | Որոնել

| | |
|---|---|
| Նիստի անցկացման վայր | Թումանյան համայնքի Թումանյան քաղաքի մշակույթի պալատի Սմարթ սենյակում |
| Նիստի տեսակ | ՀԵՐԹԱԿԱՆ |
| Նիստ վարող | ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ |
| Արձանագրող | ՌՈՒԶԱՆՆԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ |
| Մասնակիցներ | |
| Նիստին ներկա ավագանու անդամներ | |
| Նիստի արձանագրությունը | |

Նիստի տեսահոլովակը

Ավագանու որոշման նախագիծ

| ՀՀ | Վերնագիր |
|---|---|
| 98-Ա | ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ |

Ավագանու որոշում

1°C Mostly sunny Поиск ENG 12:05 24.12.2025

**ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

| | |
|---|---|
| 24 Հունիս | <<ԿԱՆԱՅՔ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՄԵՋ>> միջազգային օր |
| 31 Դեկտեմբեր | Ամանոր |
| 6 Հունվար | Սուրբ ծնունդ և հայտնություն |
| 13 Հունվար | Հին նոր տարի |
| 28 | ... |

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

<<Լոռու մարզի Թումանյան համայնքի Քարինջ գյուղի ՆՈՒՀ>> ՀՈԱԿ-ի դաստիարակների մրցույթ
2025,Դեկտեմբեր 15 - 2026,Հունվար 15

<<Լորուտ գյուղի ՆՈՒՀ>> ՀՈԱԿ-ի դաստիարակների մրցույթ
2025,Դեկտեմբեր 22 - 2026,Հունվար 22

Թումանյանի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության տրամադրելու մասին:
2025,Դեկտեմբեր 23 - 2026,Հունվար 22

**ՀԱՐՑՈՒՄ**

https://tumanyancity.am/Pages/Misc/Announces/view.aspx?recID=1846

## Հայտարարություններ

Որոնել

Հայտարարությունների քանակը՝ 361

- Թումանյանի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության տրամադրելու մասին:
- <<Լորուտ գյուղի ՆՈՒՀ>> ՀՈԱԿ-ի դաստիարակների մրցույթ
- <<Լոռու մարզի Թումանյան համայնքի Քարինջ գյուղի ՆՈՒՀ>> ՀՈԱԿ-ի դաստիարակների մրցույթ
- «Թումանյան քաղաքի ՆՈՒՀ >> ՀՈԱԿ-ի դաստիարակների թափուր պաշտոնների մրցույթ
- ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀՐԱՎԵՐ (Վերջնաժամկետը լրացել է)
- Թումանյանի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը օտարելու և վարձակալության տրամադրելու մասին
- << Դսեղի ՆՈՒՀ>> ՀՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ դաստիարակի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար (Վերջնաժամկետը լրացել է)
- Վանաձոր-Ալավերդի-Վրաստան միջպետական ճանապարհի վնասված հատվածների վերաբերյալ հանրային քննարկում (Վերջնաժամկետը լրացել է)
- ԽՈՋԱՆՆԵՐԸ ԵՎ ԶՈՐԱՑԱԾ ՏԵՐԵՎՆԵՐԸ ԶԱՅՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիմել համայնքապետարան
Մասնակցային բյուջետավորում - 2025
Հետևեք Ձեր դիմումի ընթացքին
Հայտնել խնդրի մասին
Հերթագրվել մանկապարտեզ
Ծառայությունների հավաքածու
Հանրային քննարկում
Տրամադրված թույլտվություններ
Շինարարության թույլտվություններ
Հաշվետվություններ

---

<<ՈՒՂՂԱԿԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ>>
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՀԿ
ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Գ. ՔՈԹԱՆՋՅԱՆԻՆ

N 1465
*25 դեկտեմբեր 2025թ.*

Հարգելի՛ պարոն Քոթանջյան,

Ի պատասխան Ձեր 24.12.2025 թվականի թիվ 02/279 գրությանը,

Թումանյան համայնքում 2025 թվականի նոյեմբերի 28-ին տեղի ունեցած ավագանու հերթական նիստի արձանագրության թիվ 97-Ա որոշման մեջ տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ՝ դեկտեմբերի 24-ի փոխարեն գրվել է դեկտեմբերի 26,որը մեր կողմից կարճ ժամանակում ուղղվել է:
Միաժամանակ հայտնում եմ,որ վերը նշված որոշումը կարող եք տեսնել ինչպես Թումանյանի համայնքապետարանի այնպես էլ մարզպետարանի կայք էջում:

Հարգանքով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Հարգանքով՝ «Ուղղակի ժողովրդավարություն»

ՀԿ նախագահ Գ. Քոթանջյան

25.12.2025թ.

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ
ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ

h.1764038
25-12-2025թ.
Նախընտրած ծանուցման ձևը՝
Էլ.փոստի միջոցով

Հասցեատեր՝ *Լոռու մարզպետարան*

Դիմող՝ *«ՈՒՂՂԱԿԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ» ՀԿ*
Հասցե՝ *ԼՈՌԻ, ՎԱՆԱՁՈՐ, ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ Փ., 47/13-1,*
directdemocracymonitoring@gmail.com : 37477343745

Գրությունը ուղարկվել է էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի միջոցով՝ կազմակերպության կողմից առանձին կցված ֆայլով:

Կից՝ 1 ֆայլ